ԳԼՈՒԽ 9.

ԱՆՀԱՏԱԿԱՆ (ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ) ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 40. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ (ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ) ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Անհատական (անձնավորված) հաշվառումն արտացոլում է ապահովագրության ենթակա անձանց պարտադիր կենսաթոշակային ապահովագրության համար կատարված ապահովագրական վճարումների մասին անձնավորված տեղեկատվություն:

Կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների միասնական բազայի (այսուհետ՝ բազա) ստեղծման նպատակն է՝

1) ապահովել կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց մասին տվյալներ հավաքելը.

2) նպաստել կենսաթոշակային ապահովագրության ոլորտի հարաբերությունների կարգավորմանը եւ ապահովել ֆիզիկական անձի կենսաթոշակային ապահովագրության իրավունքի պաշտպանությունը.

3) կենսաթոշակի չափը պայմանավորել կատարված ապահովագրական վճարումներով եւ ապահովագրական ստաժի տեւողությամբ.

4) անհատական հաշիվներում արտացոլել կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների եւ աշխատավարձի չափերը, ինչպես նաեւ կենսաթոշակի իրավունք տվող՝ օրենքով նախատեսված այլ տվյալներ:

ՀՈԴՎԱԾ 41. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԶԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համար անհրաժեշտ բազան ձեւավորվում է՝

1) աշխատող քաղաքացիների մասին կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմին գործատուների եւ ֆիզիկական անձանց կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացվող տվյալներից.

2) գործատուների եւ ֆիզիկական անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ծավալով ներկայացվող այլ տվյալներից.

3) ֆիզիկական անձանց մահվան մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից ներկայացվող տվյալներից.

4) օրենքով սահմանված կարգով պահանջվող անհրաժեշտ այլ տվյալներից:

(41-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-184-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 42. ԱՆՀԱՏԱԿԱՆ (ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ) ՀԱՇՎՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության ենթակա յուրաքանչյուր ֆիզիկական անձի համար անձնավորված հաշվառման բազայում էլեկտրոնային եւ փաստաթղթային տեսքով բացված հաշվառման քարտում արտացոլվում են ֆիզիկական անձի սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը եւ հետեւյալ տվյալները.

1) ազգանունը, անունը, հայրանունը.

2) ծննդյան օրը, ամիսը եւ տարին.

3) (42-րդ հոդ. 1-ին մ 3-րդ կետն ուժը կորցրել է 11.11.05 ՀՕ-223-Ն օրենք)

4) սեռը.

5) հաշվառման եւ (կամ) փաստացի բնակության վայրի հասցեն.

6) այն փաստաթղթի անվանումը, տալու ժամկետը, սերիան, համարը, որից վերցվել են տվյալները.

7) քաղաքացիությունը.

8) ֆիզիկական անձի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների մասին օրենսդրությամբ սահմանված տվյալները եւ նրանց սոցիալական ապահովության քարտերի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքների համարները.

9) աշխատավարձի (դրան հավասարեցված եկամտի) չափը, որից կենսաթոշակային ապահովագրության համար վճարումներ են կատարվել.

10) ապահովագրական վճարումների չափը՝ նշելով այն տարին եւ ամիսը, որոնց համար դրանք կատարվել են.

11) աշխատանքային եւ հանրօգուտ այլ գործունեության, պարտադիր զինվորական ծառայության, գործազրկության եւ օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածների մասին տվյալներ.

12) արտոնյալ կենսաթոշակային ապահովագրության իրավունք տվող աշխատանքի հատուկ պայմանների մասին տվյալներ.

13) կենսաթոշակների նշանակման, հաշվարկման (վերահաշվարկման) եւ վճարման օրը, ամիսը եւ տարին, կենսաթոշակի չափը. 14) կուտակման սկզբունքով ձեւավորվող՝ կենսաթոշակային ապահովագրության համար կատարված վճարումների մասին տվյալներ.

15) տեղեկություն ֆիզիկական անձի մահվան մասին:

Անհատական հաշվի՝ ֆիզիկական անձի հաշվառման քարտի ձեւը սահմանում է կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բազան ձեւավորող եւ վարող լիազոր մարմինը:

(42-րդ հոդվածը փոփ. 24.09.03 ՀՕ-3-Ն, 14.12.04 ՀՕ-184-Ն, 22.02.07 ՀՕ-106-Ն օրենքներ)

ՀՈԴՎԱԾ 43. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԱՐՈՒՄԸ

Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության ենթակա անձանց անհատական (անձնավորված) հաշվառման բազան Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ձեւավորում եւ վարում է կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմինը:

Անհատական տվյալները պաշտպանվում են օրենքով սահմանված կարգով:

Ֆիզիկական անձն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով ծանոթանալ անհատական (անձնավորված) հաշվառման բազայի՝ իրեն վերաբերող տվյալներին:

(43-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-184-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 44. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բազայի տվյալներն օգտագործվում են կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու), վճարելու համար եւ օրենքով սահմանված այլ նպատակներով:

Կենսաթոշակային սոցիալական ապահովագրության բազայի տվյալներն անձի մահվանից հետո պահպանվում են օրենքով սահմանված կարգով: